

ՓՇՐԱՆՔՆԵՐ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԻՑ

Ա

ԱՇՈՒՂ ՇԱՄՁԻ ԲԱԼԻ

Հայ գրականական գրականութեան պայծառ, բայց անյայտութեան մէջ մտադրած ու մոռցուած աշուղներէն մէկն է Շամշի Բալին, որի կեանքի եւ աշուղական ու հասարակական դործունէութեան մասին շատ քիչ տեղեկութիւններ ունինք:

Շամշի աշուղի կեղծ անունն է, որ նըշանակում է մոմագործ, իսկ Բալի, թւում է մեղ, աղպանուան համառոտութիւնն է (*): Այսուհետ կեղծ անունն էլ ցոյց է տալիս, որ նա, ըստի աշուղութիւնից, եղել է մոմագործ:

Իր ժամանակի գրադէտ, առաջադէմ, գրականական շնորհքով եւ բանաստեղծական ձիրքով օժտուած այս աշուղի ծննդեան եւ մահուն թուականները, սակայն, յայտնի չեն: Այսքանը միայն որոշ է, որ նա ապրել է ստեղծագործել է 18-րդ դարի վերջերին եւ 19-րդ դարի առաջին շրջանում:

Նրա աշուղական դործունէութեան գրեթե ամբողջ կենսական եղել են Բորչալու գաւառի հայաբնակ եւ հայաշատ քաղաքներն ու գիւղերը եւ գլխաւորապէս Թիֆլիսը, որ նա ժողովրդի սրտում վառ է պահել աշուղական երգի ու երաժշտութիւնը:

Ծերունիների վիպաութեամբ աշուղն իր դուրեկան եւ հրապուրելի ձայնով եւ շոնգուրի ու քնամանկայի նուագակցութեամբ առանձին փայլ է տուել ժողովրդական իրենքներին, հարսանիքներին, տոնախմբութիւններին եւ գրաւել է ժողովրդի սիրտն ու համակրանքը:

Այդ շրջանում էլ նա յորինել եւ Հայ աշուղական գրականութեան աւանդ է թողել մի շարք անպատճառ բայց զոդորելի ոտանաւորներ, որոնք հարստացրել են Հայ աշուղական

գրական գրականութեան դանձաբանը: Այդ երգերն էլ աշուղի անունը տարածել են հայրենակ գիւղերում եւ քաղաքներում:

Ընդգծենք սակայն, որ աշուղի երգերի զամօթարը դժբախտաբար, մեղ չի հասել միայն որոշ երգերը պահպանուել են ձեռագիր տաղարաններում: Նրանցից մէկը 1840 թուին Բորչալուում գրուած մի ձեռագիր զամօթար է, որ այժմ գտնուում է մեր գրական արխիւում: Այդ տետրի մի քանի էջերը դարդարում են աշուղի յորինած երկու երգերը: Դրանցից առաջինը քնարական մի պարզ բայց սրտաբուլի ոտանաւոր է, ուր աշուղը պատկերել է իր սիրած կարի հողեկան գեղեցիկ բարեմասնութիւնները, նրա էական յատկանիւնն ու շնորհքը: Երկրորդը պատկերի նման ճշաշխունք է, սիրական եւ սիրուն: Միբարոշոր աշուղը խոր հիացմունքով երգել է նաեւ իր հարկ հանդէպ տաճար խորունկ սէրը: Գեղեցիկ եւրբ Շամշի Բալի կեանքն է, նրա երգի ու շոնգուրի հոգին: Եւ նա ամէն ինչ մատաղ է անում իր քաղցր, անուշ ու սիրուն կարքին: Ահա ոտանաւորի լրիւ պատկերը.

Ա՛խ. քո ջամալիդ մատաղ,
հե՛լք ու քնամալիդ մատաղ.
Կեանք ու անկալիդ մատաղ,
Գիւրմաւն շալիդ մատաղ:

Գնած տեղդ բաց չիլիս,
Եւ գնում եմ, լաց չիլիս.
Տխուր, տրտում գու չիլիս,
Խոճարն մամ ցալիդ մատաղ:

Ըստագով արքնում ես,
Պատկերի պէս մաշխում ես.
Միքնում ես, սիրում ես,
Կամար ումքերիդ մատաղ:

(*) Բալ քրքրեմ ճշմանկում է մեղ: Շամշի Բալի քերիս մեղրամեղից մամ պատրաստող:

Գիւլաքաքնով կարած դօշիդ,
կամ ես տալիս էմ խօշիդ:
Մեռնեմ ես էմ մարման դօշիդ,
Ջէյրամ-մարալիդ մատազ:

Բուսկամ է ամանչես,
Սամբուլի պէս կամանչես-
Շամշի Բալիմ քեզ մօտ կամչես,
Սիրումն աշքերիդ ես մատազ(°):

Աշուղ Շամշի Բալին իր կեանքի որոշ շրջանում ապրել է երգ ու նուագի եւ լուսաւորութեան կենտրոն Թիֆլիսում, ուր ժողովրդի ուրախ եւ զուարթ կեանքը, նրա սիրուն երգերն ու պարերը, հնչող գունապնդ երաժշտութիւնը եւ աննման «գիւլաքաները» շատ խոր տպաւորութիւն են թողել նրա հոգու վրայ եւ նա մի ամբողջ ոտանաւոր (մուխամազ) է նուիրել Թիֆլիսին, բարձր գլխահատելով ժողովրդի հոգեկան երջանիկ ապրումները, նրա ուրախ ու զուարթ կենցաղային սովորութիւններն ու գեղեցկութիւնները. պատկերել է նաեւ զերգ ու պարի հագոն ունեցող սիրուն «գիւլաքաներին»: Աշուղն իր տպաւորութիւնները նկարել է այսպիսի երանգաւորումներով.

Ով չի տեսել, չգիտէ լուսաքը, համը Թիֆլիսի,
Գիշեր-ցերեկ չի լուսւմ սայրաքը, զամը Թիֆլիսի.
Ջովդ ու սափով է անցնում ամէմ մի ժամը Թիֆլիսի,
Համ եմ տալիս մաշլիսիմ էմ գիւլաքանը Թիֆլիսի,
Սէյր ու սովաչի միջիմ չես տեսի զամը Թիֆլիսի:

Գիւլաքաները քովումն, քրգի ու պարի հագ ունիմ,
Թովուզի պէս գարգարկիմ, քալումն պէս փարվագ
[աւմիմ]
Ջանիլ-լուսիւրը, ծնրը համաշա սայրաք. սագ ունիմ,
Մշտական բալկն, օքախ, չրազլիմ փիւնդագ ունիմ,
Շամշի Բալիմ տեսւմ է-աչդ է սիքամը Թիֆլիսի:

Աշուղ Շամշի Բալին իր գուսանական - հասարակական գործունէութեամբ եւ իր աւանդ թողած ոտանաւորներով Հայ աշու-

ղական գրականութեան պատմութեան մէջ ուրոյն տեղ է գրաւում: Նա այն վաստակաւոր աշուղներից է, որը թէեւ ընդմիջւոյ բաժանուել է մեզներից, սակայն չի մեռել, այլ ապրում է եւ իր պարզ, բայց գողորդիկ կերպով, խօսում է մեր սրտերի հետ:

Բ

Ա Շ Ո Ւ Ղ Դ Ա Ր Ձ Ի Օ Ղ Լ Ա Ն

Հայ աշուղական գրականութեան պատմութեան մէջ նույնպէս անյայտ մնացած եւ համարւում մոռացուած գուսաններից մէկն է Դարձի Օղլանը, որի մասին կենսագրական տեղեկութիւններ չկան: Յայտնի է միայն, որ նա ապրել է Բորչալուի գաւառում, 18-րդ դարի վերջերին եւ 19-րդ դարի առաջին շրջանում: Նա առանձին հակում է ունեցել ո՛չ միայն դէպի աշուղական արվեստը եւ յորինել է միայն հայերէն երգեր, այլեւ իր ամբողջ կեանքը նուիրել է աշուղական երգին ու շոնգութիւնին. իսկ իր հմայիմ ձայնով եւ հմուտ նուագածութեամբ ժողովրդի մէջ վառ է պահել գուսանական արվեստի ու երաժշտութեան սէրը:

Դնարեղակ աշուղ է Դարձի Օղլանը, որի երգերի մէջ մեծ տեղ են գրաւում սիրային ոտանաւորները, որոնք գրի ենք առել 1840 թուականին գրուած ձեռագիր տաղարանից: Դրանք պարզ, անպաճոյճ բայց պատկերաւոր երգեր են, որոնց մէջ աշուղը նկարել է իր սիրային ապրումները եւ հոգեկան յոյսերը:

Հայաստան յիպ քեզ պէս գեօգալը,
Դօշք լցրիմ ես գմբախտ ու լալը,
Սպիտակ բուխաչիդ վրի ջուխտ խալը.
Ոսկէ շաքը ճակատդ է գարգարած,
Փխալայ աչքերդ զայմով քաշած:

Նագու՛մ մէշքիդ կապած միմա քամարը,
Դու ես իմ սիրելի գոված քարը,
Աշխարհումը յիպ քեզ մնամը.
Ոսկէ շաքը ճակատդ է գարգարած,
Փխալայ աչքերդ զայմով քաշած:

(°) Այս ոտանաւորն աւմի մի այլ տիպակ, որը գտնոււմ է մեր գրական արխիւում: Ար. Եր.

կախաւ ես, մամ ես զալի բազումը,
 Նոր դուս էկամ շամամ ես քաղումը,
 Ջիգեարս երեւի ես, եփմամ ես եղումը.
 Ոսկի շարքը մակատող է գորգաբարձ,
 Փխալայ այժերդ եմ զալամով քաշած:

Ստամբոլից դուս էկամ մար մուշ ես,
 Արգումից հեռացար, հիմա էլ Մուշ ես,
 Երկմայիմ մամամայի պէս ամուշ ես,
 Ոսկի շարքը մակատող է գորգաբարձ,
 Փխալայ այժերդ զալամով քաշած:

Վարդ, մամուշանկ հասով փնջած քայգուլ ես,
 Սոխակից քաղցր երգող բիւրիւկ ես,
 Դարձի Օզլամիմ դու տիրում ես կալուս.
 Ոսկի շարքը մակատող է գորգաբարձ,
 Փխալայ այժերդ զալամով քաշած:

Գեղեցիկ ետրը Դարձի Օզլանի կեանքն
 է. նա մէկն է այն պատւի սիրուններից, որի
 ունեցիկը կամար են, աչքերը զինջան. նա
 հազել է ճամբանուր ու խաբայ ասլաղը, ու
 ջունքը առանձին գրաւուրժիկ են տալիս նրա
 գեղեցկութեանը: Բայց թէ աշուղի սիրածը
 հոգեկան ինչպիսի յառաւելութիւններով է օժ-
 տուած, այդ մասին նա որեւէ նկար չի գը-
 ծել, միայն իր ետրի պատկերը վրձինել է
 այսպէս:

Աստանց ինչի, պառչոյ մերքամ.
 Ում սէր չի տվիր, կրակուեց մրա քամ.
 Գիշեր-ցերեկ զապար յումի ու զինջամ,
 Ուճերդ կամար, այժերդ փնջամ:

Արի՛ բամ ասեմ, հագուս դուս ես,
 Թայգուլ ու ասեմ ու յալիսակ մուս ես.
 Յարգամում ասար գետի գնդկամ յարմ ես,
 Դու ես Ազամայ գրախտիմ պառապամ:

Հաճի ես մախմուր ու խաբայ ասլաղը,
 Որ առնուած է տառը մամէք գազը.
 Ամէն օր ասելիքդ է խորոված զազը,
 Դարձիցս ցցել ես, ծառայ ես չինել ինչ գրամ:

Շատ գեղեցիկ ես, Արիւմ գառն ես,
 Դրախտամ միջի դուս եկած ծառն ես.
 Ասանց աչալի գուս հոգի կ'առնես,
 Ողջ աշխարհումը չկայ քեզ մամ:

Սրտանց սիրած ետրս ես, դես բահել ես.
 Ազմիւ սէրդ իմմից ո՞նց խմայել ես.
 Դարձի Օզլամիմ մտալ պահել ես,
 Ո՛չ փախր կ'ամես, ո՛չ մեծ, ո՛չ իշխամ:

Ահա սրանք են հայաշուղական արուես-
 տի փշրանքները, որոնք փոխների մէջ ըն-
 կած ձեռագիր տաղարանից փրկելով յանձ-
 նում ենք Հայ դուստնական գրականութեան
 պատմութեանը:

ԲԱՌԱՐԱՆ

1. Զամալ-դէմը, կերպարանք, դիմանկար, գեղծ-
 անքիւն: 2. Գեղեցիկ-նոր, տաղանդ, կատար-
 լութիւն: 3. Անվաղ-գրութիւն, վիճակ, կենցաղ:
 4. Դովալ-հարստութիւն, կարք, կարողութիւն:
 5. Մալ-պարանք, կայք, ունեցումներ: 6. Արեւում-
 ձեռանք: 7. Գիւլարաք-կերպարի մի տեսակը, եղ-
 կանք: 8. Գոշ-գործեր: 9. Մարման-թափել: 10.
 Կապար-համեղ, համարք: 11. Դամ-քէֆ, ուրախու-
 թիւն, ժամանակ: 12. Զով-քէֆ, ուրախութիւն,
 խնջոյք: 13. Սափա-վայելք, գոհարութիւն, ուրա-
 խութիւն: 14. Սովա-տառուտ, սակարկութիւն:
 15. Ղամ-ցաւ, վիշա, հոգս: 16. Թալուգ-տիր-
 տար: 17. Թալուգ-շահն, բաղէ: 18. Փարվազ
 տալ-տարալ, ճախրել: 19. Զահել-մուսալ-երիտա-
 տար, պատանի, նորահաս: 20. Սոյարաք-զաղցր գը-
 րայց, խոսք ու զրոյց, հաւարոյթ: 21. Բալկան-պո-
 ալգամ: 22. Օքալ-սենեակ: 23. Զրազվան-հրաշա-
 լոյս: 24. Փիանդազ-փոռածք, ուղեգործ: 25. Սի-
 քամ-գարմանք, հիացմունք: 26. Զուխտ-զոյգ: 27.
 Փխալայ-մեծ գաւաթ: 28. Ղալամ-գրիչ, վրձին:
 29. Միմա-հաւաքանիք, դերձանք: 30. Բաղ-այդէ:
 31. Շամամ-փոքրիկ հասուէտ սեխ: 32. Ջիգեար-
 ք, լեարդ: 33. Թայգուլ-ծաղկեփունջ: 34. Իմ-
 չի-լեռնիք, նուր: 35. Գոշ-լըթունք: 36. Մերքամ-
 բուս: 37. Փնջամ-յախմապահեայ փոքր գաւաթ:
 38. Թաղ-տա, ճիւղ: 39. Դաղիլ-խաբանել, խոցել:
 40. Խաբայ-կերպարի մի տեսակը: 41. Ասլա-տառ-
 կառ, կերպարի տեղում: 42. Ղազ-տաղ: 43. Աշալ-
 ուրհաս, ճակատագիր, փորձանք: